# Սիպիլ

## Ագռավները

Սև պատանքին ներքև ամպոտ գիշերին
Արյունի թուխ մառախուղ մը կ՚երկարի.
Հրոընդյուններ լացի կոծի կը մարին
Մահասարսուռ դաշտին վրրա պայքարի:

Հիմա ճիչերն համակ լրռած են արդեն,
Դիակներու վրրա մահը կը շրջի,
Եվ ագռավներն իրենց սևը կը բարդեն
Համատարած խորունկ սուգին հետ շուրջի:

Կը մոտենան կոչնականները մահվան.
Կրտուցներն իրենց քաղացի տենդով կը հևան,
Լանջքերն իրենց քաղցի տենդով կը հևան,
Ու կը կառչին մագիլներնեն երկաթե:

Այստեղ ինկած զինվոր մոր դեռ մեռած չէ
Բայց դնդեր մ՚իսկ խրլրտելու ապիկար,
Իր սերերը, իր հուշքերը կը կոչե
Հերոսական գրլուխն հակած դեպի վար:

Ագռավներու հոծ թափորը կը թառի
Ծաղիկ կյանքին վեհ արյունը ծրծելու.
Այս սիրատենչ սրտին վրրա քաջարի

Զինվորն, ավա՜ղ, հիմա բախտին է հըլու:

Ամեն կողմե կըռինչքներով կը վազեն,
Եվ արյունի ճապաղիքներ կը հոսին,

Բըզըքտելով հոշ-հոշ դեմքեն ու վիզեն
Դեռ բաբախուն թարմ բեկորները միսին . . .

Անգո՜ւթ, անգո՜ւթ սև ագռավներ մարդակուլ
Անկարեկիր իր թարմության ու գեղին,
Ի՜նչպես իր հուսկ հեծեծանքին կ՚ըլլաք խուլ .
Անե՜ծք ձեզի, անե՜ծք բոլոր ձեր ցեղին . . .

Բայց… կը խորհիմ, ո՞րն ավելի է անգութ .
Մարդի՞կ, որոնք գիտակցորեն գիշակեր,
Կը հոշոտեն զիրար փառքի համար սուտ
Քայքայելով բյուր երազներ ու կյանքեր:

Թե թռչուննե՞րն անբան, անմիտ, անոթի,
Որ անգիտակ մեր ըզգացմանց թանկագին,
Կ՚արշավեն հոն ուրտեղ կյանքը կը դադրի,
Հագուրդ տալու իրենց քաղցին, պապակին:

1915

Յատուկ Պոեմ